ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

15-ը մայիսի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 15-ը Ընտանիքի միջազգային օրն է, որը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվել է հասարակության մեջ ընտանիքների կարևոր դերը ընդգծելու և նրանց առջև ծառացած խնդիրների վրա ուշադրություն հրավիրելու նպատակով:
Մեզ՝ հայերիս համար ընտանիքը բացարձակ արժեք է, որի լիարժեք ու առողջ զարգացումը կարևորելով, ամենօրյա աշխատանքով ներդնում ենք մեծ ջանքեր:
Ամուր և բարձր արժեհամակարգով ընտանիքները կարևոր օղակ են քաղաքակիրթ հասարակության ձևավորման, համայնքների զարգացման ու պետության առաջընթացի հարցում: Այս առումով իմ անմիջական ուշադրությամբ ու հետևողականությամբ Աբովյանի համայնքապետարանը մեծածավալ աշխատանքներ է կատարում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների խնդիրները մեղմելու և անհրաժեշտ ծառայություններ մատուցելու ուղղությամբ:
Մեծապես կարևորելով խոցելի ընկանիքների կարիքները՝ Աբովյանի համայնքապետարանի սոցիալական ծրագրերի առողջապահության և տեղեկատվության բաժինը, «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» ՀՈԱԿ-ը պարբերաբար իրականացնում են կարիքների գնահատման, ուղղորդման աշխատանքներ, խորհրդատվություններ, կազմակերպում ծնողավարման և մասնագիտական դասընթացներ: Միաժամանակ համայնքապետարանի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ տեղահանված ընտանիքները, որոնց հետ տարվում են իրավական իրազեկման աշխատանքներ:
Սիրելի՛ հայրենակիցներ.
Ընտանիքը յուրաքանչյուրիս համար առանցքային ու թանկ նշանակություն ունի, որին նվիրված այս գեղեցիկ օրվա առիթով շնորհավորում եմ բոլորիս, մաղթում եմ քաջառողջություն, բարեկեցություն և ընտանեկան երջանկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**